ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

19 փետրվարի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

15
(3224)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿՈՆՋՈՐՅԱՆԻ ԵՂԲՈՐ ԴԵՄ 2-ՐԴ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԸ

ԱԺ ՔՊ խմբակցության նախագահ Հայկ Կոնջորյանի եղբորը՝ Ավետ Կոնջորյանին, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից 1 տարի ժամկետով զրկված լինելու պայմաններում վարել է ավտոմեքենա:

Ավետ Արսենի Կոնջորյանը, 07.07.2025 թվականի վարչական իրավախախտման գործով որոշմամբ 1 տարի ժամկետով՝ 07.07.2025 թվականից մինչեւ 07.07.2026 թվականը, զրկված լինելով տրանսպորտային միջոց վարելու իրավունքից եւ այդ մասին պատշաճ ծանուցված լինելով, 2025 թվականի հոկտեմբերի 15-ին՝ ժամը 14:15-ի սահմաններում, Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայում՝ «Օրիգինալ ֆուդ»-ի մոտակայքում, վարել է «Մերսեդես» մակնիշի 11 IM 110 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, որի ընթացքում կանգնեցվել է տվյալ տարածքում ծառայություն իրականացնող ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության աշխատակիցների կողմից, ինչի կապակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ համապատասխան արձանագրությունը: ⇨ էջ 3



Մանկավարժական համալսարանի պաշտոնյաների կաշառքի գործով նոր հանգամանքներ են ի հայտ գալիս: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նախաքննական մարմինը գործով անցնող անձանց հարցաքննությունից հետո նոր հանգամանքներ է ի հայտ բերել, ու չի բացառվում, որ մեղադրյալների շարքը ավելանա: Չի բացառվում նաեւ, որ բուհում այս պահին պաշտոնավարող անձինք եւս հայտնվեն իրավապահների տեսադաշտում: Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գեւորգյանի նկատմամբ հարուցված քրեական վարույթը ավարտական փուլում է: Չի բացառվում, որ առաջիկայում նախաքննական մարմինը քրեական վարույթով նախաքննության ավարտ հայտարարի եւ գործը ուղարկի դատարան: ArmLur.am-ը գրել էր, որ Հակակոռուպցիոն դատարանը մերժել էր քննիչի միջնորդությունը՝ ՀՀ մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գեւորգյանի նկատմամբ տնային կալանքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Հակակոռուպցիոն դատարանում ՀՀ նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի դեմ հարուցված քրեական գործը մտել է փակուղի: Նիստերը նշանակվում են, սակայն ՀՀ նախկին ոստիկանապետին չեն կարողանում բերել դատարան. առողջական վիճակը թույլ չի տալիս ներկայանալ դատարան: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ փաստացի դատարանում քրեական գործի քննությունը տապալված է, եւ գրեթե 1 ամիս է՝ նախկին ոստիկանապետին դատարան չեն կարողանում բերել: Վլ. Գասպարյանը, 1997-2010 թթ. զբաղեցնելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության պետի պաշտոնը, կատարել է իրեն վստահված առանձնապես խոշոր չափերով գույքի վատնում, այն է՝ հիշյալ վարչությունում պաշտոնի նշանակված, իր հետ փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող Սուսաննա Սարդարյանի՝ փաստացի ծառայության չներկայանալու եւ ծառայողական պարտականությունները չկատարելու պայմաններում, ենթակա աշխատակիցների միջոցով կազմակերպել է պետական միջոցներից աշխատավարձի եւ դրան հավասարեցված միջոցների վճարումը՝ այդպիսով պաշտոնեական դիրքն օգտագործելով վատնման եղանակով հափշտակել է առանձնապես խոշոր չափերով գումար:



«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրների փոխանցմամբ՝ ՔՊ թիմում դժգոհություն է առաջացրել այն փաստը, որ կուսակցության նախընտրական ցուցակի առաջին փուլի ընտրությունների հանձնաժողովը ղեկավարել է ԱԺ փոխխոսնակ Հակոբ Արշակյանը, իսկ քարտուղարը եղել է ՔՊ խմբակցության պատգամավոր Քրիստինե Պողոսյանը: Բանն այն է, որ թե՛ Արշակյանը, թե՛ Պողոսյանը հրաժարվել են ընդգրկվել 2026 թվականի ՔՊ նախընտրական ցուցակում: Այսինքն՝ փակել են իրենց կյանքում խորհրդարանական էջը: ՔՊ-ի մեր աղբյուրների փոխանցմամբ, հարց է բարձրացվել՝ ինչու է նման պատասխանատու գործընթացը վստահվել այն գործիչներին, որոնք արդեն իսկ որոշել են հեռանալ խորհրդարանական կյանքից: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Արշակյանի եւ Պողոսյանի թեկնածությունները հաստատվել են ՔՊ վարչության կողմից, եւ նախաձեռնությունը եղել է վարչապետ Նիկոլ Փաշինյանինը, քանի որ նա համարել է, որ Արշակյանն ու Պողոսյանը օբյեկտիվ կլինեն, անձնական շահ չեն ունենա: ՔՊ վարչությունն էլ քվեարկել է առաջարկի օգտին՝ հանձնելով նրանց այդ կարեւոր պատասխանատվությունը: Ի դեպ, նշենք, որ մարտի 27-ին եւ 28-ին կայանալիք ՔՊ նախընտրական ցուցակի առաջին 50 համարների ընտրությունները եւս Արշակյանն ու Պողոսյանն են ղեկավարելու:

ԱՆՀԻՄՆ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ

«ՈՎ ՆՍՏՈՒՄ Է, ԴԱՌՆՈՒՄ Է ԴԵՎ»

Փետրվարի 17-ին դատախազության դիմաց բողոքի ակցիա էր նախաձեռնել «Համահայկական ճակատ» կուսակցությունը՝ ի պաշտպանություն Վեհափառ Հայրապետի, եւ մենք զրուցել ենք կուսակցության նախագահ Արսեն Վարդանյանի հետ:

-Պարոն Վարդանյան, ի՞նչ նախաձեռնություն է, եւ ի՞նչ պահանջ ունեք:

-Մենք շատ երկար ժամանակ տարբեր պահանջներով տարբեր վայրերում կատարել ենք ակցիաներ, այսօր մենք ակցիա ենք անցկացնում սահմանադրական կարգի խախտման չհետեւելուն, որովհետեւ դատախազությունը, սահմանադրական դատարանը, ԱԱԾ-ն ունեն իրենց հստակ ամրագրված պարտականությունները, որը, իհարկե, բխում է մայր օրենքից: Մենք կամային ոչինչ չենք անում, ներկա պահին մեր գնահատականը դատախազությանը եւ մնացած կառույցներին արտահայտում ենք բացասական, որովհետեւ իրենք կատարում են հատուկ ցուցումներով հատուկ առաջադրանքներ, ասես դիվերսանտներ լինեն՝ Ադրբեջանից հատուկ ներմուծված: Դատախազությունը անհիմն քրեական գործ է հարուցում ցանկացած մարդու վրա, վերջինը եղել է Եպիսկոպոսաց ժողովը արգելելը եւ Կաթողիկոսի վրա քրեական գործ հարուցելը: Ով բարձրաձայնում է եւ չի հանդուրժում կառավարության վարած քաղաքականությունը, դուրս է գալիս՝ նրանց համար տեռորիստ են դառնում:

-Ձեզ համար սպասելի՞ էր, որ երբեւէ Հայաստանում այսպիսի իրավիճակ կստեղծվի, որ անգամ Կաթողիկոսի նկատմամբ քրեական հետապնդում՝ կալանք կսահմանվի:

-Երբ Նիկոլ Փաշինյանը պատգամավոր էր, շատ ակտիվ ժողովրդավարական պատգամավոր էր, նա միշտ հարցեր էր բարձրացնում՝ ժողովրդին հուզող, իսկ երբ դարձավ իշխանություն, դարձավ դեւ, աթոռից է, թե սեւյակից՝ ով նստում է այդ աթոռին, դառնում է դեւ: Հիմա ժողովուրդը իր համար ոչ մի բան է, նա այսօր խոսում է ժողովրդավարական երկրից, բայց ՀՀ-ում ժողովրդավարություն բացարձակ գոյություն չունի: Մենք երկար տարի ծառայել ենք Հայաստանի Հանրապետությանը, եւ չենք տեսել, որ վարչապետը հրաժարվի հայկական հողերից կամ անի այնպիսի արտահայտություն, որ բանակը պետք է դառնա 4-րդ կարգի բանակ, ես ուզում եմ հասկանալ՝ դա որն է, անդամալույծ բանակ: Նաեւ ասում է, որ Հայաստանի Հանրապետության անվտանգության երաշխավորողը բանակը չի, իսկ ո՞վ է, դո՞ւ՝ Նիկոլ Փաշինյան. դու նույնիսկ չես կարողանում քո անվտանգության երաշխիքը ապահովել: Սա երկրի կառավարություն չի, եւ միանշանակ պետք է փոխվի երկրի ղեկավարումը:

-Արդյո՞ք այս իրադարձությունները պայմանավորված են համապետական ընտրություններով, թե՞ այլ ենթատեքստեր եք տեսնում այստեղ:

-Ես ասել եմ ու եւս մեկ անգամ կրկնում եմ՝ 1994 թվականից մեր պետության կառավարությունը զավթված է: Նիկոլ Փաշինյանը ասում է՝ այս մեկը ինչ-որ երկրի ագենտ է, այն մեկը ագենտ է, պարզ է, ոչ մեկ չի թաքցրել, որ իրենք ագենտ են, իրենք բոլորը ագենտներ են՝ներդրված Հայաստանի Հանրապետությունը ներսից քանդելու: Որովհետեւ պատերազմը սկսելուց առաջ Նիկոլ Փաշինյանը առաջին ամբիոնից հայտարարեց, որ ինչ ելքով էլ ուզում է ավարտվի, մենք մեզ պարտված չենք զգալու: Իսկ ես ուզում եմ հասկանալ՝ նա ի՞նչ գիտեր՝ ինչ ձեւ է ավարտվելու պատերազմը:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԿԱՐՈՂ Է ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒԺ ԳՈՐԾԱԴՐԵԼ

ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը հայտարարել է, որ Վաշինգտոնն իրեն իրավունք է վերապահում ռազմական ուժ կիրառել, եթե Թեհրանի հետ բանակցությունները փակուղի մտնեն: Այս մասին նա ասել է Fox News հեռուստաալիքին տված հարցազրույցում:

«(ԱՄՆ) նախագահը շատ տարբերակներ ունի: Մենք ունենք շատ հզոր զինված ուժեր: Նախագահը ցույց է տվել դրանք օգտագործելու պատրաստակամություն: Նա նաեւ ունի հիանալի դիվանագիտական թիմ եւ ցույց է տվել նաեւ այն գործի դնելու պատրաստակամություն», - ասել է քաղաքական գործիչը:

Միեւնույն ժամանակ ԱՄՆ փոխնախագահը հայտարարել է, որ Վաշինգտոնը Մերձավոր Արեւելքում միջուկային զենքի տարածման կանխումը համարում է առաջնահերթ խնդիր, քանի որ Թեհրանի մոտ միջուկային զենքի հայտնվելը կառաջացնի սպառազինությունների անվերահսկելի մրցավազք տարածաշրջանում:

«Միացյալ Նահանգներն ունի որոշակի կարմիր գծեր: Մեր գլխավոր նպատակն այստեղ այն է, որ մենք Իրանին թույլ չտանք միջուկային զենք ստանալ: Մենք չենք ցանկանում միջուկային զենքի տարածում: Եթե Իրանը միջուկային զենք ունենա, կհայտնվեն բազմաթիվ վարչակարգեր՝ որոշները բարեկամական, որոշները՝ ոչ այնքան բարեկամական, որոնք կցանկանան ստանալ միջուկային զենք նրանցից անմիջապես հետո: Դա աղետ կդառնա ամերիկացի ժողովրդի համար», - ասել է Վենսը:

Նա հավելել է, որ Վաշինգտոնը շատ կցանկանար այս իրավիճակը լուծել երկխոսության եւ բանակցությունների միջոցով: Անդրադառնալով ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ Ժնեւում կայացած անուղղակի բանակցություններին՝ Վենսը հայտնել է, որ դրանք որոշ առումով լավ են անցել, պայմանավորվածություն է ձեռք բերվել կրկին հանդիպել, սակայն միեւնույն ժամանակ նախագահ Դոնալդ Թրամփը որոշ կարմիր գծեր է քաշել, որոնք իրանական կողմը դեռ չի ցանկանում ընդունել:

«Մենք կշարունակենք աշխատել, բայց, իհարկե, նախագահն իրեն իրավունք է վերապահում ասելու, թե երբ է իր կարծիքով դիվանագիտությունը հասել իր բնական ավարտին: Մենք հույս ունենք, որ գործը դրան չի հասնի, բայց եթե դա տեղի ունենա, ապա որոշումը կլինի նախագահինը», - եզրափակել է Վենսը:

Փետրվարի 6-ին Օմանի մայրաքաղաքում տեղի է ունեցել Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ Թեհրանի միջուկային ծրագրի շուրջ անուղղակի բանակցությունների առաջին փուլը:

Փետրվարի 17-ին Շվեյցարիայի Ժնեւ քաղաքում, կրկին Օմանի միջնորդությամբ, անցկացվել է Իրանի եւ Միացյալ Նահանգների միջեւ անուղղակի բանակցությունների երկրորդ փուլը:

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

Ռեշտ-Աստարա երկաթուղային նախագծի գործնական իրականացումը՝ «Հյուսիս-Հարավ» միջազգային փոխադրամիջանցքի շրջանակում, կսկսվի 2026 թվականի ապրիլի 1-ին: Ինչպես «Արմենպրես»-ը տեղեկանում է ՏԱՍՍ գործակալությունից, այդ մասին լրագրողներին հայտնել է ՌԴ էներգետիկայի նախարար Սերգեյ Ցիվիլյովը՝Ռուսաստանի եւ Իրանի առեւտրատնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի նիստի շրջանակում:

Էներգետիկայի նախարարի խոսքով՝ կողմերին հաջողվել է կարգավորել բոլոր վիճելի հարցերը, որոնք խանգարում էին նախագծի գործարկմանը:

«Հյուսիս-Հարավ միջանցքը ոչ միայն էներգետիկ, այլեւ տրանսպորտային միջանցք է: Դրա հետ է կապված Ռեշտ-Աստարա երկաթուղային գծի կառուցումը: Մենք գործնականում մշակել ենք նախկինում առկա բոլոր հարցերը, ներառյալ հողերի գրանցումը եւ արտոնությունների ստացումը, - ասել է Ցիվիլյովը: - Մենք այսօր ասացինք, որ ապրիլի 1-ին Ռուսաստանում տրանսպորտային շաբաթվա ընթացքում կլինի վերջնական համաձայնություն այս նախագծի իրականացումը սկսելու վերաբերյալ»:

Նախարարը բարձր է գնահատել պրոֆիլային մասնագետների աշխատանքը, որոնք մասնակցել են շինարարության նախապատրաստմանը:

2023 թվականին Ռուսաստանը եւ Իրանը «Հյուսիս-Հարավ» նախագծի շրջանակում կնքել են համաձայնագիր՝ Իրանի եւ Ադրբեջանի միջեւ ճանապարհի Ռեշտ-Աստարա 160-կիլոմետրանոց հատվածի համատեղ կառուցման մասին, որը կապահովի միջանցիկ երթեւեկություն դեպի Պարսից ծոցի նավահանգիստներ: Նախագծի ընդհանուր արժեքը կազմում է 1,6 միլիարդ եվրո: Մոսկվան եւ Թեհրանը համատեղ կֆինանսավորեն նախագծումը, կառուցումը, ինչպես նաեւ ապրանքների եւ ծառայությունների մատակարարումը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է Եվրոպական հանձնաժողովի ընդլայնման եւ արեւելյան հարեւանության հարցերով գլխավոր տնօրեն Գերտ Յան Կուպմանի հետ: Զրուցակիցները քննարկել են տարածաշրջանային տնտեսական ու տրանսպորտային փոխկապակցվածության զարգացմանն ուղղված ծրագրեր եւ այդ ուղղությամբ ՀՀ-ԵՄ համագործակցության հարցեր:

Արարատ Միրզոյանը եւ Գերտ Յան Կուպմանը մտքեր են փոխանակել ՀՀ-ԵՄ առաջիկա բարձրաստիճան միջոցառումների ու այցերի օրակարգերի եւ գործընկերության զարգացմանը միտված նոր շոշափելի արդյունքների ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների շուրջ:

Անդրադարձ է կատարվել ժողովրդավարական դիմակայունության շարունակական ամրապնդմանն ուղղված նախաձեռնություններին:

Արարատ Միրզոյանը եւ Գերտ Յան Կուպմանը մտքեր են փոխանակել նաեւ տարածաշրջանային զարգացումների, Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացում առկա դինամիկայի ու հնարավորությունների եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի շուրջ:

ԱՐԳԵԼԱՆՔԸ ՎԵՐԱՑՐԵԼ Է

Armlur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝Հակակոռուպցիոն դատարանը ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի դեմ հարուցված նոր քրեական գործով նախաքննության փուլում կիրառված խափանման միջոցը՝երկրից չբացակայելու արգելքը, վերացրել է, եւ Սերժ Սարգսյանը, ըստ էության, կարող է դուրս գալ Հայաստանից:

Արդյոք ՀՀ գլխավոր դատախազությունը կբողոքարկի դատարանի որոշումը՝կսպասենք զարգացումներին:

Նշենք, որ այս պահին Հակակոռուպցիոն դատարանում Սերժ Սարգսյանի դեմ հարուցված 4 քրեական գործ կա, որոնց քննությունը Հակակոռուպցիոն դատարանում շարունակվում է:

ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵՑ

Լոռու մարզի դատախազի կողմից Գյուլագարակ համայնքի ղեկավարին հասցեագրված միջնորդագրի արդյունքում՝ Քննչական կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում, Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի սեփականության իրավունքն է վերականգնվել 3.857921 հա մակերեսով, գյուղատնտեսական նշանակության 7 հողամասերի նկատմամբ:

Այս մասին հայտնում են Գլխավոր դատախազությունից՝նշելով, որ հողամասերի՝ շուկայականին մոտարկված կադաստրային ընդհանուր արժեքը 4 միլիոն 131 հազար դրամ է:

2025 թվականին եւս քրեական վարույթի շրջանակում դատախազի կողմից Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ղեկավարին հասցեագրված միջնորդագրի արդյունքում, համայնքին են վերադարձվել գյուղատնտեսական նշանակության 4 հողամասեր՝ 0.13572 հա, 0.708749 հա, 0.45116 հա եւ 0.446412 հա մակերեսներով:

ՄԻՊ-Ի ԴԻՄՈՒՄԸ

Սահմանադրական դատարանը քննության է ընդունել Մարդու իրավունքների պաշտպանի դիմումը:

Դիմումով վիճարկվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այն կարգավորումը, համաձայն որի՝ եթե կենսաթոշակի վճարումը դադարեցվել է, ապա չվճարված կենսաթոշակի գումարը ենթակա է վճարման միայն դիմելու կամ կենսաթոշակի վճարումը վերսկսելու (կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու) համար հիմք հանդիսացող տեղեկատվությունը ստանալու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել:

Պաշտպանը խնդրահարույց է համարում այն, որ անձի կենսաթոշակ ստանալու իրավունքի առկայության պայմաններում չվճարված կենսաթոշակի գումարի վճարումը սահմանափակվում է միայն մեկ տարվա ժամանակահատվածով, ինչը, ըստ Մարդու իրավունքների պաշտպանի՝ հակասում է Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքին:

«Պետության ցանկացած միջամտություն սեփականության իրավունքին, այդ թվում՝ կենսաթոշակի վճարման իրավունքի սահմանափակումը, պետք է լինի օրինական, կանխատեսելի, համաչափ եւ ուղղված ընդհանուր շահին, իսկ սեփականությունից զրկումը՝ որպես առավել խիստ միջամտություն, կարող է կիրառվել միայն բացառիկ դեպքերում եւ օրենքով հստակ ամրագրված պայմաններով»,- ընդգծում է Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը:

Այսպիսով, Մարդու իրավունքների պաշտպանը եզրահանգել է, որ թեեւ անձն օրենսդրորեն ձեռք է բերում կենսաթոշակի եւ կենսաթոշակ ստանալու իրավունք, սակայն գործող օրենսդրության կարգավորումները հակասում են ՀՀ Սահմանադրությանը՝ ստեղծելով իրավիճակներ, երբ անձը ունի կենսաթոշակ ստանալու իրավունք, բայց կոնկրետ ժամանակահատվածի համար զրկվում է իրեն հասանելիք կենսաթոշակից: Խնդրին բախվում են բազմաթիվ քաղաքացիներին, որոնցից շատերը, հարցին լուծում գտնելու նպատակով, դիմել են Մարդու իրավունքների պաշտպանին:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ՀԱՎԱՔԸ

Ավստրիայի Սանկտ Փյոլթըն քաղաքում նախատեսված Եպիսկոպոսաց ժողովի փոխարեն անցկացվում է եպիսկոպոսների հավաք:

Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը հայտնել էր, որ Վեհափառի բացակայության պայմաններում ժողովի կարգավիճակը փոխվել է:

Արտագնա ժողովի մեկնարկից երկու օր առաջ դատախազությունը Արման Սարոյանի հետ կապված դատական ակտի կատարմանը խոչընդոտելու մեղադրանքով քրեական հետապնդում է հարուցել Ամենայն Հայոց Կաթողիկոսի նկատմամբ եւ արգելել է Վեհափառի ելքը: Նույն մեղադրանքով դատախազությունը արգելել էր նաեւ Մայր Աթոռի վեց եպիսկոպոսի եւ մեկ քահանայի ելքը:

ԽԱԽՏԵԼ Է ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆԻ ԵՂԲՈՐ ԴԵՄ 2-ՐԴ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԸ

ԱԺ ՔՊ խմբակցության նախագահ Հայկ Կոնջորյանի եղբորը՝ Ավետ Կոնջորյանին, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից 1 տարի ժամկետով զրկված լինելու պայմաններում վարել է ավտոմեքենա:

Ավետ Արսենի Կոնջորյանը, 07.07.2025 թվականի վարչական իրավախախտման գործով որոշմամբ 1 տարի ժամկետով՝ 07.07.2025 թվականից մինչեւ 07.07.2026 թվականը, զրկված լինելով տրանսպորտային միջոց վարելու իրավունքից եւ այդ մասին պատշաճ ծանուցված լինելով, 2025 թվականի հոկտեմբերի 15-ին՝ ժամը 14:15-ի սահմաններում, Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայում՝ «Օրիգինալ ֆուդ»-ի մոտակայքում, վարել է «Մերսեդես» մակնիշի 11 IM 110 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, որի ընթացքում կանգնեցվել է տվյալ տարածքում ծառայություն իրականացնող ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության աշխատակիցների կողմից, ինչի կապակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ համապատասխան արձանագրությունը:

Դատարանում ուսումնասիրելով քրեական գործի նյութերը, մասնավորապես ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի ձեւ 8 տեղեկանքը, համաձայն որի՝ Ավետ Արսենի Կոնջորյանը նախկինում չի դատապարտվել եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական վարույթով նախաձեռնվել է համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ, դատարանն արձանագրում է, որ մեղադրյալը ծանուցվել է համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ կիրառելու հնարավորության եւ իրավական հետեւանքների մասին, ինչպես նաեւ քննիչի, պաշտպան Մելանյա Սարգսյանի եւ մեղադրյալ Ավետ Կոնջորյանի մասնակցությամբ կազմվել է արձանագրություն առ այն, որ մեղադրյալ Ավետ Արսենի Կոնջորյանը չի վիճարկում իրեն ներկայացված մեղադրանքի փաստական հիմքն ու իրավական գնահատականը, պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո կամավոր ցանկություն է հայտնում, որ դատարանում գործի քննությունն իրականացվի համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթի կարգով:

Արդյունքում, դատարանը վճռել է՝

1. Ավետ Արսենի Կոնջորյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքում եւ պատիժ նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 375.000 ՀՀ դրամի չափով:

2. ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 8-րդ մասի կիրառմամբ՝ Ավետ Արսենի Կոնջորյանի նկատմամբ նշանակված տուգանքի՝ 375.000 ՀՀ դրամ գումարի վճարումը թույլատրել կատարել 1 /մեկ/ տարվա ընթացքում:

3. Ավետ Արսենի Կոնջորյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ բացակայելու արգելքը, թողնել անփոփոխ՝ մինչեւ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, իսկ դրանից հետո վերացնել:

Զրուցեցինք Ավետ Կոնջորյանի փաստաբան Մելանյա Սարգսյանի հետ՝ հասկանալու համար, թե ինչու են դատարանում նշել, որ նա նախկինում դատապարտված չի եղել. նա խարդախության համար նախկինում ազատազրկման է դատապարտված եղել ու մեղադրական վճիռ կա նրա մասով: «Ժամկետներ կան, երբ ժամկետները լրանում են, անձը այլեւս դատվածություն ունեցող չի համարվում. ծանր հանցագործություն, առանձնապես ծանր, որոշակի տարիներ կան, երբ որ դատվածությունից հետո անցնում են այդ տարիները, ցանկացած անձ համարվում է դատվածություն չունեցող»,-նշեց Մելանյա Սարգսյանը:

Դատելով իրավիճակից՝ ՔՊ-ական Հայկ Կոնջորյանի եղբոր համար նախկինում խարդախության գործով կալանավորվել ու դատապարտվելը դաս չի եղել, ու նա տարիներ անց կրկին խախտել է օրենքը ու կրկին հայտնվել դատարանի առաջ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՌԱՋԸՆԹԱՑ

Ռուսաստանը եւ Ուկրաինան համաձայնել են շարունակել աշխատանքը հակամարտության ավարտի համաձայնագրի շուրջ եւ Շվեյցարիայում տեղի ունեցած բանակցություններում նշանակալի առաջընթաց են գրանցել: Այս մասին հայտարարել է ԱՄՆ նախագահի հատուկ բանագնաց Սթիվ Ուիթքոֆը Ժնեւում անցկացված երրորդ եռակողմ բանակցություններից հետո:

«Նախագահ Թրամփի հաջողությունն այս պատերազմի երկու կողմերին սեղանի շուրջ նստեցնելու գործում հանգեցրել է նշանակալի առաջընթացի, եւ մենք հպարտ ենք աշխատել նրա ղեկավարության ներքո՝ դադարեցնելու սպանությունները այս սարսափելի հակամարտության ընթացքում: Երկու կողմերն էլ համաձայնել են տեղեկացնել իրենց համապատասխան ղեկավարներին եւ շարունակել աշխատանքը համաձայնության հասնելու ուղղությամբ», - X-ում գրել է ԱՄՆ նախագահի բանագնացը՝ ամփոփելով փետրվարի 17-ին տեղի ունեցած քննարկումների արդյունքները:

Ուիթքոֆը նաեւ շնորհակալություն է հայտնել Շվեյցարիային՝ Ժնեւում բանակցությունները հյուրընկալելու համար:

Ռուսական պատվիրակությունը գլխավորում է նախագահի օգնական Վլադիմիր Մեդինսկին, ամերիկյան պատվիրակությունը՝ հատուկ բանագնաց Սթիվ Ուիթքոֆը եւ Դոնալդ Թրամփի խորհրդական եւ փեսա Ջարեդ Քուշները, իսկ ուկրաինական պատվիրակությունը՝ նախագահ Վոլոդիմիր Զելենսկու աշխատակազմի ղեկավար Կիրիլ Բուդանովը:

Ժնեւում հանդիպումները Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ուկրաինայի միջեւ եռակողմ բանակցությունների շարունակությունն են, որոնց առաջին եւ երկրորդ փուլերը տեղի են ունեցել Աբու Դաբիում հունվարի 23-24-ին եւ փետրվարի 4-5-ին:

ՎԱՏԻԿԱՆԸ ՉԻ ՄԱՄՆԱԿՑԻ TRIPP-ԻՆ

Սուրբ Աթոռը չի մասնակցի Խաղաղության խորհրդի աշխատանքին «իր յուրահատկության պատճառով»: Այս մասին հայտնել է Վատիկանի պետական քարտուղար կարդինալ Պիետրո Պարոլինը:

«Վատիկանը չի մասնակցի Գազայի Խաղաղության խորհրդին իր յուրահատկության պատճառով, որը բացահայտորեն տարբերվում է մյուս պետությունների յուրահատկությունից: Կան հանգամանքներ, որոնք փոքր-ինչ տարակուսանքի մեջ են գցում, որոշ կրիտիկական հարցեր, որոնք պարզաբանում են պահանջում», - մեջբերում է նրա խոսքը Corriere della Sera թերթը:

Հունվարին Պարոլինը հայտնել էր, որ Հռոմի Լեւոն XIV պապը հրավիրվել է Խաղաղության խորհուրդ, որը Միացյալ Նահանգները ձեւավորել է Գազայի հատվածի կառավարման համար՝ մերձավորարեւելյան կարգավորման շրջանակներում: Նա նշել էր, որ «հարցը քննարկվում է»:

Հունվարի 22-ին շուրջ 20 երկրի ներկայացուցիչներ Դավոսի Համաշխարհային տնտեսական համաժողովի շրջանակներում ստորագրել են Խաղաղության խորհրդի կանոնադրությունը, որն ի սկզբանե ստեղծվել էր Գազայի հատվածի խնդրի խաղաղ կարգավորման համար: Հետագայում Վաշինգտոնը հայտարարեց, որ խորհուրդը կզբաղվի նաեւ այլ տարածաշրջաններում հակամարտությունների կանխարգելմամբ եւ կարգավորմամբ:

Խաղաղության խորհրդի առաջին նիստը կկայանա փետրվարի 19-ին: Նիստին մասնակցելու համար ԱՄՆ է մեկնել նաեւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

4 ԱՆՁ ՍՊԱՆՈՂԸ

ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ

ArmLur.am-ի ձեռքում է հայտնվել տեսանյութ, թե ինչպես է Արամուսում 4 ժամվա մեջ 4 քաղաքացիների սպանություն կատարող Թադեւոս Հովակիմյանը պատրաստվել սպանել Արմենուհի եւ Գեւորգ Ղազարյաններին:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 12-ին Աբովյան համայնքի Արամուս բնակավայրում գտնվող հողամասում հայտնաբերվել էին սպանված Արմենուհի եւ Գեւորգ Ղազարյանների մարմինները: Ու մինչ իրավապահները դեպքի վայրում գործողություններ էին իրականացնում, Ջովաշեն գյուղում եւս 2 անձանց սպանված գտան, որոնցից մեկը Աբովյանի բնակիչ Վահե Մարտիրոսյանն էր, մյուսը՝ Մարինա Մուշեղովնան:

Ամուսինները Հայաստան էին եկել Ռուսաստանից իրենց մտերիմների հարսանիքին: Ամուսինները կանգ են առել Կոտայքի մարզի Ջովաշեն գյուղում՝ տաղավարում հանգստանալու համար: Այնտեղ նրանց մոտեցել է անծանոթ տղամարդ՝ հրացանով: Տղամարդը պահանջել է մեքենայի բանալիները, սակայն Մարինայի ամուսինը դիմադրել է նրան: Արդյունքում անծանոթը սառնասրտորեն գնդակահարել է զույգին եւ հեռացել առեւանգված մեքենայով: Նրանց մարմինները հայտնաբերվել են ավելի ուշ. նրանք պառկած էին նույն տաղավարում:

4 ժամվա մեջ 4 անձի սպանության գործով կալանավորվեց Արամուսի բնակիչ Թադեւոս Հովակիմյանը: Վերջինս իրավապահներին հայտնել էր, որ 20 տարի առաջ իրեն Արամուսում ծեծել էին ու ինքը վրեժը լուծել էր Արմենուհի եւ Գեւորգ Ղազարյաններից:

ArmLur.am-ը իր կայքում ներկայացրել է տեսանյութ, թե ինչպես է սպանության գործով կալանավորված Թադեւոս Հովակիմյանը պատրաստվում: Սպանության օրը մաքրում է մեքենան, իր տան բակում գտնվող անսարք վիճակում գտնվող մեքենայի մեջ պահում պարկը, որի մեջ, ըստ լուրերի, եղել է զենք եւ փամփուշտ, որից հետո պարկի մեջ դրված զենքն ու փամփուշտները տեղադրում է իր մեքենայի բեռնախցիկում: Նա ողջ օրը հետեւում է, թե ինչ շարժի մեջ են Գեւորգ Ղազարյանը եւ նրա կինը: Ավելին, նկատում ենք, որ Գեւորգ Ղազարյանը դաշտից գալիս է տուն, տան մոտակայքում գործողություններ իրականացնում ու կրկին հետ վերադառնում դաշտ:

Արդյունքում, սպանություն կատարող Թադեւոս Հովակիմյանը վարում է մեքենան դեպքի վայր՝ Արամուսի դաշտավայր, ու սպանում ամուսիններին:

Կոտայքում հոկտեմբերի 12-ին չորս մարդու կյանք խլած տղամարդը՝ Թադեւոս Հովակիմյանը, որն արդեն 15 տարի որսորդական միության անդամ է եւ վերջին տարիներին որսորդական հրացան է ունեցել, ՀՀ քննչական կոմիտեի կողմից պաշտոնապես անմեղսունակ էր ճանաչվել եւ կարող է խուսափել պատասխանատվությունից:

ArmLur.am լրատվականը զրուցել էր Արամուսում սպանված Գեւորգ Ղազարյանի տուժողի ներկայացուցիչ Գոռ Ալոյանի հետ: Վերջինս պահանջում էր, որ սպանություն կատարողին կրկնակի փորձաքննության ենթարկեն, որպեսզի իրենց կասկածները ամրապնդվեն՝ արդյոք տղամարդը ունի առողջական խնդիրներ: Արդյունքում, փաստաբանի բողոքը բավարարվել է, եւ ՔՊ անդամ ներկայացած Թադեւոս Հովակիմյանը կրկնակի փորձաքննության կենթարկվի:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՋԻՆՎՈՐԻ ԴԱԺԱՆ ԾԵԾԸ

Դաժան ծեծի ենթարկված պայմանագրային զինծառայողի դեպքից անցել է ավելի քան 10 օր, սակայն մինչ այժմ դեպքով որեւէ ձերբակալված անձ չկա: Պայմանագրային զինծառայողի մեկ աչքը հեռացրել են, իսկ մյուսի կորուստը եւս հնարավոր է:

ArmLur.am-ին հասած տեղեկություններով՝ իրավապահները գիտեն կատարողների շրջանակը, սակայն նախաքննական մարմինը դեռեւս չի շտապում նրանց ձերբակալել կասկածելի հանգամանքների պատճառով:

Կատարվածը զորամասի հետ կապ չունի եւ կապված է հեռախոսի գնելու ու գումար ստանալու հետ: Փետրվարի 5-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, Նուբարաշեն վարչական շրջանում գտնվող ՀՀ պաշտպանության նախարարության զորամասին հարակից տարածքում 24-ամյա Ավետիք Մ.-ը դաժան ծեծի է ենթարկվել եւ ծայրահեղ ծանր վիճակում տեղափոխվել Մուրացանի զինվորական հոսպիտալ:

ՀՀ քննչական կոմիտեից հայտնել են, որ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքի առթիվ Երեւան քաղաքի քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ եւ կատարվում է նախաքննություն, սակայն ձերբակալված անձ դեռեւս չկա:

Ք. Մ.

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ «ԾԱՂՐԻ» ԳԱԳԱԹՆԱԿԵՏ

Միջազգային իրավապաշտպան Amnesty International կազմակերպությունը հանդես է եկել հայտարարությամբ, որը թարգմանաբար ներկայացվում է ստորեւ.

«Անդրադառնալով Ռուբեն Վարդանյանին 20 տարվա ազատազրկման դատապարտելու վճռին, որը մինչեւ Լեռնային Ղարաբաղի (Արցախ)՝ 2023 թվականին ադրբեջանական ուժերի կողմից գրավումը տարածաշրջանում դերակատարում ունենալու համար դատվող 16 էթնիկ հայ առաջնորդներից վերջինն էր, Amnesty International-ի Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տնօրեն Մարի Սթրաթերսն ասել է.

«16 ամբաստանյալների դատապարտումը, որը գագաթնակետին հասավ Ռուբեն Վարդանյանի դեմ այս դատավճռով, իսկական ծաղր է: Այն փաստը, որ Ռուբեն Վարդանյանը եւ մյուսները՝ իր պես քաղաքացիական մի քանի անձինք, դատվել են ռազմական դատարանում, ինքնին լուրջ մտահոգություններ է առաջացնում եւ անհամատեղելի է արդար դատաքննության սկզբունքների հետ: Տասնամյակներ շարունակ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունից տուժածները՝ թե՛ Հայաստանում, թե՛ Ադրբեջանում, արժանի են ճշմարտության, արդարադատության, փոխհատուցման եւ չկրկնվելու երաշխիքների, մինչդեռ այս դատավճիռները վիրավորանք են միջազգային իրավունքով արգելված հանցագործությունների բոլոր զոհերի համար:

Չափազանց լուրջ բազմաթիվ հանցագործությունների համար մեղադրվող Ռուբեն Վարդանյանի եւ մյուս ամբաստանյալների դատավարություններն անցել են փաստացի փակ ձեւաչափով: Մեղադրանքները հիմնված են եղել «ապացույցների» վրա, որոնք մեղադրյալներին ներկայացվել են իրենց համար անհասկանալի լեզվով, եւ որոնք պատշաճ ձեւով չեն թարգմանվել: Միայն Վարդանյանին առաջադրված ավելի քան 40 մեղադրանքները, այդ թվում՝ «ահաբեկչություն»-ը եւ «մարդկության դեմ հանցագործություններ»-ը, դատավարության ընթացքում հրապարակային ձեւով նույնիսկ չեն էլ բացահայտվել: Amnesty International-ը Ադրբեջանի իշխանություններից տեղեկատվություն է խնդրել դատավարության եւ ապացույցների մասին, բայց պատասխան չի ստացել:

Ադրբեջանը պետք է կատարի իր պարտավորությունները մարդու իրավունքների միջազգային իրավունքի համաձայն եւ ապահովի, որ հանցագործությունների մեջ մեղադրվող բոլոր անձինք դատվեն միջազգային իրավունքի եւ արդար դատավարության չափանիշների լիարժեք համապատասխանությամբ»:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԹՄՐԱՄԻՋՈՑ

Համայնքային ոստիկանության Դիլիջանի բաժնի ծառայողները, իրացնելով թմրամիջոց պահելու եւ օգտագործելու վերաբերյալ օպերատիվ տեղեկությունները, փետրվարի 12-ին այցելել են Դիլիջան քաղաքի բնակիչ 51-ամյա տղամարդու բնակարան, որտեղ խոհանոցի ակնհայտ տեսանելի հատվածում նկատել են թմրանյութի նմանվող զանգվածով թափանցիկ տոպրակ: 51-ամյա տղամարդը ձերբակալվել եւ կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել է նախաքննական մարմին: Նախաձեռնվել է քրեական վարույթ: Նշված բնակարանում կատարված զննությամբ հայտնաբերվել է 74,73 գրամ թմրամիջոցի նմանվող զանգված: 51-ամյա տղամարդը ձերբակալվել եւ տեղափոխվել է ձերբակալվածների պահման վայր:

ԿԵՂԾ ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐ

ՆԳՆ ոստիկանության Լոռու մարզի օպերատիվ կառավարման կենտրոն փետրվարի 9-ին հաղորդում է ստացվել, որ «Օպել» մակնիշի մեքենայի վարորդը Մարգահովիտ գյուղի գազալցակայանում վճարել է կեղծ թղթադրամով: Համայնքային ոստիկանության Գուգարքի բաժնի ծառայողները պարզել են, որ ժամը 16-ի սահմաններում «Օպելի» վարորդը, լիցքավորելով 1000 դրամի գազ, վճարել է 20 000 դրամանոցով եւ ստանալով մանրը՝ լիցքավորողին խնդրել է մանրել եւս մեկ 20 000 դրամանոց: Որոշ ժամանակ անց լիցքավորողը նկատել է, որ երկու թղթադրամն էլ կեղծ են: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ նշված արարքը կատարել է Վանաձոր քաղաքի 47-ամյա բնակիչը: Հրազդանի բաժնի համայնքային ոստիկանների հետ ձեռնարկած միջոցառումներով պարզվել է, որ 47-ամյա տղամարդը գտնվում է Հրազդան քաղաքում: Համատեղ բացատրական աշխատանքի արդյունքում նա ներկայացել է Գուգարքի բաժին եւ հայտնել, որ հուշանվեր-թղթադրամները ձեռք է բերել օնլայն գնումների հարթակի միջոցով, նաեւ ներկայացրել է 20 000 դրամ անվանական արժողությամբ 46 հուշանվեր-թղթադրամ:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն փետրվարի 6-ին Էրեբունի բժշկական կենտրոնից հաղորդում էր ստացվել, որ կտրած-ծակած վերքերով բուժօգնության է տեղափոխվել 46-ամյա մի տղամարդ: Ոչ սթափ վիճակում գտնվող տղամարդը հայտնել էր, որ վնասվածքները ստացել է ընկնելու հետեւանքով: Համայնքային ոստիկանության Նուբարաշենի բաժնի ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզել են, որ ժամը 18-ի սահմաններում Նուբարաշենի 11-րդ փողոցի շենքերից մեկի հարակից ավտոտնակների մոտ տեղի ունեցած վիճաբանության ժամանակ 46-ամյա տղամարդուն դանակով հարվածներ է հասցրել Արարատի մարզի Բարձրաշեն գյուղի բնակիչ 41-ամյա տղամարդը: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում փետրվարի 16-ին 41-ամյա տղամարդը հայտնաբերվել եւ ներկայացվել է նախաքննական մարմին, որտեղ տվել է խոստովանական ցուցմունք:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 17-ից 18-ը բացահայտվել է 178 հանցագործություն, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐ ԿԱՆ

2024 թվականին Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների թվով 55 ուսուցիչներ աշխատանքից ազատվել են, քանզի ունեին միջնակարգ մասնագիտական կրթություն, պետական կամ մասնավոր, պետականորեն հավատարմագրված բուհի դիպլոմ չունեն: Դրանից հետո Տավուշի մարզի հանրակրթական շատ դպրոցներում ուսուցիչների բազում թափուր տեղեր առաջացան, նույնիսկ հայտարարված մրցույթներով դրանք հնարավոր չի լինում լրացնել: Աշխատանքից ազատված, միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող, մանկավարժական կրթությամբ ուսուցիչների մեծամասնությունը երկար տարիների մանկավարժական հաջող աշխատանքի փորձ ունեին, իսկ նրանց փոխարեն աշխատանքի են ընդունել որոշ դեպքերում ոչ մանկավարժական կրթությամբ, ոչ տվյալ առարկայի մասնագետների:

Փետրվարի 11-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել՝ հարցնելով, թե փետրվարի 11-ի դրությամբ Տավուշի մարզպետի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական դպրոցներում քանի թափուր հաստիք կա, որքան հաստիքներ կան, որոնք զբաղեցվել են ոչ այդ առարկայի մասնագետ ուսուցիչների կողմից: Տավուշի մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Տավուշի հանրակրթական դպրոցների թափուր հաստիքների մասին տեղեկատվությունը տեղադրված է ԿՏԱԿ-ի միասնական հարթակում: Հաստիքները ոչ մասնագետների կողմից զբաղեցվելու մասին հաշվառում չի իրականացվել»: Իսկ ինչո՞ւ նման հաշվառում չի իրականացվում: Տավուշի մարզպետի աշխատակազմի ինտերնետային կայքում թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարությունների ցանկում 2026 թվականին առնվող հայտարարություններ չկան: 2025թ. սեպտեմբերին տեղադրվել են Նոյեմբերյան համայնքի Դեղձավան գյուղի հիմնական դպրոցում 10 դասաժամ զբաղվածությամբ մաթեմատիկայի ուսուցչի թափուր հաստիքի, Նոյեմբերյան համայնքի Բերդավանի միջնակարգ դպրոցում 22 դասաժամ զբաղվածությամբ հայոց լեզվի եւ գրականության ուսուցչի թափուր հաստիքի, 2025թ. հունվարին զետեղվել են Բերդ համայնքի Վերին Ծաղկավան գյուղի միջնակարգ դպրոցում զբաղվածության տարբեր չափերով հայոց լեզվի եւ գրականության, ռուսաց լեզվի եւ գրականության, մաթեմատիկայի, պատմության, դասվարի, զինղեկի, թվային գրագիտության եւ համակարգչային գիտության ուսուցիչների թափուր տեղերի վերաբերյալ հայտարարություններ: Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի(ԿՏԱԿ) ինտերնետային կայքի հայտարարությունների բաժնում 2026 թվականին եւ 2025թ.-ին հայտարարություններ չկան Տավուշի մարզի պետական հանրակրթական դպրոցներում ուսուցիչների թափուր տեղերի կամ դրանք զբաղեցնելու մրցույթների մասին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՐ «ԼԻԴԵՐՆԵՐ»

ՔՊ–ՈՒՄ՝ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՈՒՄ

Armlur.am-ի տեղեկություններով՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ցուցակի ներքին քվեարկությունը լուրջ շրջադարձ է եղել կուսակցության ներսում: Շատերի համար արդյունքները ոչ միայն անակնկալ, այլեւ քաղաքական ազդակ են դարձել՝ հասկանալու, թե իրականում ովքեր են այսօր ազդեցիկ դեմքերը ՔՊ-ում:

Վերջին օրերին կուսակցության ներսում ակտիվ քննարկվում է հարցը, թե ովքեր են Նիկոլ Փաշինյանից հետո այն հինգ գործիչները, որոնք փաստացի ձեւավորում են կուսակցության նոր ուժային առանցքը:

Ներքին ընտրությունների արդյունքները ցույց են տվել, որ նախկինում ազդեցիկ համարվող մի շարք ՔՊ-ականներ զգալիորեն կորցրել են իրենց դիրքերը: Ավելին՝ կուսակցության ներսում նրանց նկատմամբ վերաբերմունքն էլ է փոխվել:

Ըստ ArmLur.am-ի աղբյուրների՝ Փաշինյանից հետո ամենաշատ ձայներ հավաքած հինգ գործիչները առաջիկայում կարող են ոչ միայն ամրապնդել իրենց դիրքերը կուսակցության ներսում, այլեւ պաշտոնական բարձրացումներ ստանալ:

Քվեարկության արդյունքներն այսպիսին են.

2. Սուրեն Պապիկյան - 780 ձայն
3. Գեւորգ Պապոյան - 765 ձայն
4. Արարատ Միրզոյան - 743 ձայն
5. Վահագն Ալեքսանյան - 697 ձայն
6. Ռուբեն Ռուբինյան - 687 ձայն

Այս հինգ գործիչներն են այսուհետ դիտարկվում որպես ՔՊ-ի ներքին «լիդերներ»՝ հավաքելով առավելագույն աջակցությունը կուսակցության ներսում:

Առավել շոկային է համարվել Արարատ Միրզոյանի արդյունքը: 44-օրյա պատերազմից հետո նա, ըստ կուսակցական շրջանակների, նվազագույն շփում էր պահպանում թիմակիցների հետ, ակտիվ քարոզչություն չէր իրականացրել, սակայն կարողացել է դառնալ ամենաշատ ձայներ հավաքած ՔՊ-ականներից մեկը: Սա վկայում է, որ կուսակցության ներսում ձեւավորվել են նոր կենտրոններ, որոնք միշտ չէ, որ տեսանելի են եղել հանրության համար:

Ստացվում է, որ ՔՊ-ում ուժերի դասավորությունը փոխվում է, եւ առաջիկայում հնարավոր են նոր քաղաքական վերադասավորումներ՝ արդեն ոչ միայն կուսակցության ներսում, այլեւ պետական համակարգում:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՆՍԵՐԻ ԿՈՉԸ ԹՐԱՄՓԻՆ

Ռուբեն Վարդանյանի միջազգային փաստաբան Ջարեդ Գենսերը կոչ է արել նախագահ Դոնալդ Թրամփին կատարել հրապարակային տրված խոստումը եւ ապահովել բոլոր հայ գերիների ազատ արձակումը. «Բաքվի ռազմական դատարանի կողմից Ռուբեն Վարդանյանին կեղծ մեղադրանքներով 20 տարվա ազատազրկման դատապարտելը պարզապես արդարադատության ծաղր է:

Հարգված ձեռներեց եւ բարերար Ռուբեն Վարդանյանի միակ «հանցագործությունը» Լեռնային Ղարաբաղի հայ քրիստոնյա ժողովրդի ինքնորոշման իրավունքի պաշտպանությունն էր, մարդկանց, որոնցից մոտ 120,000-ը վտարվեցին Հայաստան՝ դառնալով Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի նախաձեռնած էթնիկ զտման զոհերը: Դատավարությունն ինքնին ամբողջությամբ կեղծիք էր, քանի որ քաղաքացիական անձանց ռազմական դատարանում դատելն ապօրինի է:

Դատաքննությունը նաեւ գաղտնի է անցկացվել, դատավարական բազմաթիվ ընթացակարգերի խախտումներով, ինչպիսիք են փաստաբանի հետ կապվելու բազմաթիվ մերժումները, դատարանի կողմից տասնյակ միջնորդությունների պարզապես անտեսումը, որոնք, ի դեպ, հենց ադրբեջանական օրենսդրությամբ պետք է դիտարկվեն մի քանի օրվա ընթացքում:

Բացի այդ, դատակոչված «վկաների» բառացիորեն բոլոր այսպես կոչված «ապացույցներն» ասեկոսեներ էին, հետեւաբար՝ անօրինական էր դրանք ապացույց դիտարկելը: Յուրաքանչյուր վկա պնդում էր, որ ինքը կամ իր ընտանիքի անդամները տուժել են հայկական զինվորականների կամ զինված այլ խմբավորումների հարձակումներից, բայց Ռուբեն Վարդանյանին այդ ամենի հետ կապող «ապացույցն» Ադրբեջանի պետական լրատվամիջոցներից նրա մեղավորության մասին լսելն էր: Դա ապացույց չէ: Հետեւաբար, Ռուբեն Վարդանյանի դատավճիռը խախտում է եւ՛ միջազգային, եւ՛ ադրբեջանական օրենքները, ու նա պետք է անհապաղ եւ անվերապահ ազատ արձակվի մյուս 19 հայ քրիստոնյա քաղբանտարկյալների եւ ռազմագերիների հետ:

Ես կոչ եմ անում նախագահ Դոնալդ Թրամփին կատարել հրապարակային տրված խոստումը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին եւ ապահովել նրանց բոլորի ազատ արձակումը նախագահ Ալիեւից, որպեսզի նրանք կարողանան անվտանգ վերադառնալ Հայաստան»:

ՆԵՐԽՈՒԺԵԼ ԵՆ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿ

Ներխուժել են ԱԺ նախկին պատգամավոր Անի Սամսոնյանի աշխատասենյակ: Այս մասին նա հայտնել է Facebook-ի իր էջում: Նա, մասնավորապես, նշել է. «Հայաստանի իրավապահ համակարգի դեկորատիվ փայլն ու «օպերատիվ» պաշտպանությունը: Դեռեւս հունվարին հաղորդում եմ ներկայացրել ՀՀ դատախազություն ինձ՝ հետամտելու եւ խուլիգանության (այդ թվում քաղաքական բնույթով) համար:

Ութ ամիս շարունակ համբերելուց հետո, երբ հասկացա, որ հետապնդումները վտանգավոր բնույթ են ստանում, որոշեցի որպես օրինապահ քաղաքացի չդիմել այլ միջոցների եւ պաշտպանություն փնտրել հայրենի իրավապահ համակարգում: Մինչեւ այսօր որեւէ քայլ չի ձեռնարկվել, իսկ բանը հասավ նրան, որ այսօր տվյալ անձը ներխուժել է իմ աշխատավայր եւ ես ստիպված եմ եղել դիմել ինքնապաշտպանության:

Գրեթե վստահ եմ, քաղաքական ստատուսի համար ինձ պատժելու դեպքում իրավապահ համակարգը մեկ րոպե չէր կորցնի: Հետո ասում եք՝ ինչի են մարդիկ դիմում ինքնադատաստանի ու չեն վստահում իրավապահներին»:

● *Հանրապետությունում, ըստ ՃՏՊ վիճակագրության, անցած 1 օրում գրանցվել է 10 ավտովթար. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ

ՆՈՐ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Ամերիաբանկը շարունակում է ընդլայնել իր մասնաճյուղային ցանցը՝ հաճախորդներին իրենց համայնքներում ավելի մոտ լինելու նպատակով: Այս անգամ Բանկի նոր մասնաճյուղ է բացվել Արարատի մարզի Արտաշատ քաղաքում: Ամերիաբանկի թվով 29-րդ մասնաճյուղն է եւ առաջինը՝ Արարատի մարզում:

Բացման առթիվ «Արտաշատ» մասնաճյուղում գործում են հատուկ առաջարկներ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար, որոնք կդառնան բանկի հաճախորդ՝ բացելով հաշիվ մինչեւ 30.06.2026թ.-ը ներառյալ:

Հատուկ առաջարկներ ֆիզիկական անձանց համար՝

- Մեկ Visa Platinum կամ MasterCard Platinum վճարային քարտի տրամադրում՝ առանց առաջին տարվա տարեկան սպասարկման վճարի,
- Անվճար հաշվի բացում՝ ծառայությունների փաթեթով,
- Ներառում է ՀՀ դրամով եւ արտարժույթով մեկական հաշիվ,
- Classic/Standard վճարային քարտ՝ առանց 4 տարվա սպասարկման վճարի
- Վերաֆինանսավորման նպատակով անգրավ վարկերի տրամադրում՝ 15%-ով,
- Փաստացի տոկոսադրույքը՝ 16,08%,
- Առաջարկը գործում է գրանցված եկամուտ ունենալու դեպքում:

Հատուկ առաջարկներ իրավաբանական անձանց համար՝

- Բիզնես հաշվի՝ «Ստարտ» եւ «Պլատինում» փաթեթների տրամադրում՝ առանց առաջին տարվա տարեկան սպասարկման վճարի,
- Ինտերնետ բանկինգ/Մոբայլ բանկինգ ծառայության տրամադրում՝ առանց առաջին տարվա տարեկան սպասարկման վճարի,
- Visa Business, Mastercard Business, Visa Platinum կամ Visa Platinum Digital Business քարտի տրամադրում՝ առանց առաջին տարվա տարեկան սպասարկման վճարի,
- Ընկերության 2 ղեկավարին / իրական շահառուին մեկական դեբետային կամ կրեդիտային վճարային քարտի տրամադրում (բացառությամբ՝ Signature կամ Infinite տեսակի քարտերի)՝ առանց առաջին տարվա տարեկան սպասարկման վճարի:

Տեխնիկապես հագեցած, հարմարավետ սրահով ու բարեհամբույր աշխատակազմով «Արտաշատ» մասնաճյուղն իր հաճախորդներին սպասում է Օգոստոսի 23 փ., 107 հասցեում՝ երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 09:30-17:00:

Ամերիաբանկի մասին

Ամերիաբանկը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը: Թվային փոխակերպման ռազմավարության ներքո՝ Բանկը ներդնում եւ շարունակաբար կատարելագործում է շուկայում եզակի պրոդուկտներ, ծառայություններ եւ նորարարական հարթակներ, որոնք միտված են բավարարելու մարդկանց ֆինանսական եւ ոչ ֆինանսական կարիքները:

Ամերիաբանկը, որպես դինամիկ զարգացող ֆինթեք միջավայր, առաջարկում է կյանքի որակը բարելավող ամբողջական լուծումներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

«KOREEZ-TELCELL-PHYSMATH» Գ

ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿ

Կորիզ կրթական ծրագիրը, ԵՊՀ-ին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցը եւ իրենց ռազմավարական գործընկեր Telcell ընկերությունը ստորագրեցին համագործակցության եռակողմ հուշագիր՝ ազդարարելով «Koreez-Telcell-Physmath» համադպրոցական մաթեմատիկական մրցույթի ընդլայնված մեկնարկի մասին:

Անցած տարվա բացառիկ հաջողությունից հետո մրցույթը դարձավ Հայաստանի կրթական կյանքի ամենամասշտաբային նախաձեռնություններից մեկը՝ միավորելով հազարավոր աշակերտների ամբողջ հանրապետությունից: Մասնակցության լայն աշխարհագրությունը, բարձր մրցակցային մակարդակը եւ եզրափակչի արդյունքները ցույց տվեցին, որ Հայաստանում մաթեմատիկայի նկատմամբ հետաքրքրությունը ոչ միայն պահպանվում է, այլեւ զգալիորեն աճում է:

Աննախադեպ հաջողության հիման վրա այս տարի համագործակցությունը վերածվում է ռազմավարական գործընկերության, եւ Telcell-ը պաշտոնապես միանում է Կորիզ կրթական շարժմանը՝ որպես երկարաժամկետ գործընկեր հատկապես «Koreez-Telcell-Physmath» մրցույթի շրջանակում:

Կորիզ կրթական ծրագրի հիմնադիր նախագահ Սուրեն Ալոյանը նշեց, որ նախորդ տարի իրենց հաջողվեց մրցութի շրջանակում համախմբել 1400 դպրոցներից 1180-ին, եւ տասնյակ հազարավոր աշակերտներ մեծ ոգեւորությամբ մասնակցեցին նշված նախաձեռնությանը:

«Մեր գլխավոր նպատակն աշակերտների շրջանում մաթեմատիկա առարկայի նկատմամբ սիրո խթանումն է: Ցանկանում ենք ցույց տալ, որ մաթեմատիկան միայն օլիմպիական հերոսների համար չէ: Այն յուրաքանչյուր երեխայի համար է՝ անկախ նրա առաջադիմությունից: Ի վերջո մենք հաջողեցինք, ուստի այս տարի որոշեցինք համագործակցությունը բարձրացնել ռազմավարական մակարդակի եւ ընդլայնել մրցույթի շրջանակները՝ ներգրավելով ոչ միայն 3-12-րդ դասարանների, այլեւ 1-12 դասարանների աշակերտներին»,- ասաց Ալոյանը:

Նա հավելեց, որ այս տարի մրցույթի շրջանակում Կորիզ հավելվածը մասնակիցներին ընձեռում է մրցույթին խաղի միջոցով պատրաստվելու հնարավորություն, ինչը նշանակում է, որ ոչ միայն կստուգվեն աշակերտների գիտելիքները, այլեւ ամբողջ տարվա ընթացքում նրանց կփոխանցվեն հավելյալ գիտելիքներ, որպեսզի մաթեմատիկայի հանդեպ սերը կրի մասսայական բնույթ:

«Այս տարի Telcell-ի հետ կնքելով ռազմավարական գործընկերության պայմանագիր՝ ընտրել ենք երկարաժամկետ փոխգործակցության տարբերակը, մինչեւ որ հասնենք մեր գլխավոր նպատակին, ըստ որի՝ ՀՀ յուրաքանչյուր աշակերտ մաթեմատիկայի հանդեպ կցուցաբերի ուրույն մոտեցում»,- ասաց Ալոյանը:

Կորիզ կրթական ծրագիրը դիմել է նաեւ գործընկերներից «Գրանտ Տորոնտոն»-ին, որն իրականացրեց նախորդ տարվա մրցույթի արդյունքների գնահատում, ինչի շնորհիվ պարզ դարձավ, որ Կորիզ մաթեմատիկական մրցույթի մասնակիցների մոտ ակադեմիական տարվա ընթացքում 38 տոկոսով բարելավվել է մաթեմատիկական գիտելիքների մակարդակը, ավելացել են սերն ու մոտիվացիան կրթության հանդեպ: Հենց այդ ամենն էլ Կորիզ կրթական ծրագրին դրդեց գնալ ռազմավարական համագործակցության:

Telcell ընկերության գլխավոր տնօրեն Արտյոմ Ղազարյանն ընդգծեց, որ ընկերության համար կրթության աջակցությունը ոչ միայն սոցիալական պատասխանատվություն է, այլեւ ներդրում երկրի ապագայի մեջ:

«2025 թվականին մեկնարկեցինք Կորիզ նախագծի հետ համագործակցությունը եւ տարվա ընթացքում միասին անցանք բազմաթիվ գործընթացներ՝ իրականացնելով տարբեր ծավալների հետաքրքիր մրցույթներ, որոնց արդյունքները մեզ համար շատ գոհացուցիչ էին: Համագործակցությունն այս տարի ստացավ ռազմավարական բնույթ, եւ մենք որոշեցինք արդեն մեր համագործակցությունը տեղափոխել ավելի երկարաժամկետ տիրույթ»,- ասաց Ղազարյանը:

Telcell-ը մեծապես կարեւորում է կրթության դերն ապագա կադրերի եւ ընդհանրապես միջավայրի զարգացման մեջ:

«Նպաստելով կրթության որակին, զարգացման գործընթացին եւ տեխնոլոգիական թեւի առաջընթացին՝ մենք ստանում ենք շատ կարեւոր հենք ապագայի համար, որովհետեւ այն երեխաները, ովքեր մասնակցում են նմանօրինակ մրցույթներին եւ այս նախագծի շնորհիվ կարողանում են ինքնադրսեւորվել, նոր գիտելիքներ ձեռք բերել, միանշանակ ապագայում կարող են մեր երկրի եւ մասնավորապես մեզ համար լինել պիտանի մասնագետներ: Հատկապես տեխնոլոգիական բնույթի կոմերցիոն ընկերությունների համար կրթված միջավայրը, որի պահանջները ժամանակի մարտահրավերների հետ համահունչ են, նպաստում է նաեւ այդ ընկերությունների դինամիկ զարգացմանը»

ԵՊՀ-ին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցի տնօրեն Արման Սարգսյանը նշեց, Կորիզ կրթական ծրագիրն արդեն երկու տարի համագործակցում է ֆիզմաթ դպրոցի հետ, եւ այդ ծրագիրն ինչ-որ առումով օլիմպիական շարժման տեսակ է դարձել՝ խթանելով երեխաների առաջընթացը:

«Մենք նույնպես շարունակաբար զբաղվում ենք շնորհալի երեխաների հայտնաբերմամբ եւ լավագույն արդյունքներ ապահովող աշակերտներին մրցույթով ընդունում ենք ֆիզմաթ դպրոց: Հետագայում ունենալով համապատասխան միջավայր՝ ապահովում ենք մեծ հաջողություններ: Կորիզ կրթական ծրագրի շրջանակում ամբողջ Հայաստանի տարածքում տեղի ունեցավ մեծ շարժում, որին երեխաները միացան մեծ ոգեշնչմամբ: Մեզ համար դա նույնպես ֆիլտրման միջոց էր, որպեսզի տեսադաշտից դուրս մնացած աշակերտներին տայինք արտոնություններ»,- նշեց Սարգսյանը:

Նա հավելեց, որ իրենք նախապես որոշել էին հանրապետական օլիմպիադայի դիպլոմակիրներին տալ հարցազրույցով ֆիզմաթ դպրոց ընդունվելու արտոնություն, իսկ հիմա նման արտոնությունից կարող են օգտվել նաեւ Կորիզ կրթական ծրագրի նախաձեռնությամբ անցկացվող մրցույթում համապատասխան արդյունքներ ապահոված երեխաները:

«Վերջին տարիները ցույց տվեցին, որ այս շարժումը տեղին է, որովհետեւ գնալով աճը նկատվում է: Օրինակ՝ այս տարի օլիմպիադայում 5-րդ դասարանցիների քանակն ավելացավ, հետեւաբար նրանց ոգեշնչելն ու վերջում աշակերտներին ու նրանց ուսուցիչներին մեծարելը շատ գովելի է: Դա իսկապես կրթության զարգացմանը նպաստող գործընթաց է, որից մեր դպրոցը ձգտում է հետ չմնալ: Ստորագրվելիք եռակողմ համագործակցության պայմանագիրը մեծ նշանակություն կունենա կրթության ոլորտում եւ հնարավորություն կտա ավելի վաղ փուլում բացահայտել ու խրախուսել այն աշակերտներին, ովքեր ապագայում կարող են դառնալ գիտության եւ տեխնոլոգիայի ոլորտի առաջատարներ»,- ասաց Սարգսյանը:

«Koreez-Telcell-Physmath» մրցույթն այս տարի կանցկացվի չորս փուլով՝ երկու առցանց եւ երկու առկա փուլերով, իսկ եզրափակիչ փուլում լավագույն մասնակիցները կմասնակցեն հանդիսավոր մրցանակաբաշխությանը:

Սա կարեւոր քայլ է, քանի որ մաթեմատիկական մտածողության հիմքերը ձեւավորվում են հենց վաղ տարիքից: Նոր ձեւաչափը հնարավորություն է տալիս արդեն առաջին դասարանից ներգրավվել առողջ մրցակցային եւ զարգացնող կրթական միջավայրում:

Telcell-ի աջակցությամբ այս տարվա մրցույթն իրականացվում է առավել լայն ընդգրկմամբ՝ ապահովելով ավելի մեծ հասանելիություն, մրցակցային միջավայր եւ բացառիկ հնարավորություններ մասնակիցների համար:

Այս տարի մրցույթը բաց է 1-12-րդ դասարանների աշակերտների համար, ովքեր գրանցվելու նպատակով կարող են այցելել www.koreez.am կայք եւ ընտրել «Koreez-Telcell-Physmath» մաթեմատիկական մրցույթը:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲ ընկերությունը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՕՍԿԱՐԻ ԴԱՓՆԵԿԻՐ

ՄԱՀԱՑԵԼ Է ԴԵՐԱՍԱՆ ՌՈԲԵՐՏ ԴՅՈՒՎԱԼԸ

Վիրջինիա նահանգի Միդլբուրգ քաղաքում գտնվող իր տանը կիրակի՝ փետրվարի 15-ին, 95 տարեկան հասակում մահացել է Ռոբերտ Դյուվալը՝ հայտարարել է նրա կինը: Դյուվալը առավել հայտնի էր «Կնքահայրը» եւ «Ապոկալիպսիսը հիմա» ֆիլմերում իր դերերով:



Ռոբերտ Դյուվալը «Կնքահայրը» ֆիլմում խաղացել է մաֆիայի խորհրդականի եւ «Ապոկալիպսիսը հիմա» ֆիլմում՝ փոխգնդապետի:

Դերասանի մահվան մասին երկուշաբթի օրը հայտարարեց նրա կինը՝ Լուսիանա Դյուվալը:

«Երեկ մենք հրաժեշտ տվեցինք իմ սիրելի ամուսնուն, սիրելի ընկերոջը եւ մեր ժամանակների մեծագույն դերասաններից մեկին: Բոբը խաղաղությամբ մահացավ տանը», - գրել է նա:

Դյուվալը արժանացել է «Օսկար» մրցանակի՝ որպես լավագույն դերասան եւ առաջադրվել է եւս վեց անգամ: Վեց տասնամյակ տեւած կարիերայի ընթացքում նա աչքի է ընկել գլխավոր եւ երկրորդական դերերում՝ ի վերջո դառնալով ռեժիսոր:

«Աշխարհի համար նա Օսկարի դափնեկիր դերասան, ռեժիսոր եւ պատմող էր: Ինձ համար նա պարզապես ամեն ինչ էր: Նրա արհեստի հանդեպ կիրքը համեմատվում էր միայն իր կերպարների, համեղ ուտելիքի եւ զրույցի հանդեպ նրա խորը սիրո հետ», - ավելացրեց Լուսիանան:

Ռոբերտ Դյուվալը Օսկար է ստացել 1983 թվականին «Նուրբ ողորմություն» ֆիլմում խնդրահարույց քանթրի երգչի դերի համար:

Նրա ամենահիշարժան կերպարներից են «Կնքահայրը» առաջին երկու ֆիլմերում մեղմ եւ նվիրված մաֆիայի խորհրդական Թոմ Հագենը եւ Ֆրենսիս Ֆորդ Կոպպոլայի «Ապոկալիպսիս հիմա» ռազմական էպոսում՝ մոլագար փոխգնդապետ Ուիլյամ Քիլգորը:

Վերջին դերում, որը Դյուվալին բերեց «Օսկար» մրցանակի անվանակարգ եւ նրան դարձրեց իսկական աստղ, նա արտաբերեց կինոյի ամենահայտնի խոսքերից մեկը:

«Ես սիրում եմ առավոտյան նապալմի հոտը», - մտորում է իր պատերազմասեր կերպարը, երբ ցածր թռչող ամերիկյան ռազմական ինքնաթիռները ռմբակոծում են ափամերձ գիծը, որտեղ նա կցանկանար սերֆինգ անել:

«Ես իմ տնային աշխատանքը կատարեցի», - ասաց Դյուվալը Լարի Քինգին 2015 թվականին թոք-շոուի ժամանակ,- «Ես իմ հետազոտությունը կատարեցի»:

Ռոբերտ Դյուվալը Հոլիվուդում ճանաչում ձեռք բերեց կյանքի համեմատաբար ուշ շրջանում: Նա արդեն 31 տարեկան էր, երբ խաղաց խորհրդավոր ճգնավոր Բու Ռեդլիի դերը Հարփեր Լիի «Ծաղրասարյակ սպանել» վեպի 1962 թվականի էկրանավորման մեջ:

Նա շարունակեց խաղալ տարբեր դերեր, այդ թվում՝ կորպորատիվ գործադիրի դեր «Ցանց» (1976) ֆիլմում, ծովային հետեւակի սպայի դեր, որը իր ընտանիքին վերաբերվում է ինչպես զինվորների «Մեծ Սանտինի» (1979) ֆիլմում, իսկ հետո՝ իր ականառու դերը «Նուրբ ողորմություն» ֆիլմում:

Դյուվալը հաճախ է ասել, որ իր սիրելի դերը 1989 թվականի հեռուստատեսային մինի-սերիալում խաղացածն է՝ քաջարի եւ իմաստուն Տեխասի ռենջեր-կովբոյ դարձած Օգաստուս Մաքքրեյը «Միայնակ աղավնի» ֆիլմում, որը նկարահանվել է Լարի ՄաքՄերտրիի վեպի հիման վրա:

ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ

Հայաստանի հրաձգության ֆեդերացիայի նախագահ Արթուր Հովհաննիսյանը Երեւանում կայանալիք Եվրոպայի առաջնությունում մեդալների ակնկալիքներ ունի: «Եվրոպայի առաջնության նախապատրաստական աշխատանքներն ընթանում են լավ: Դժվարությունն արդեն հաղթահարել ենք, որը կապված է նախապատրաստական աշխատանքի հետ: Հավաքականը շարունակում է իր նորմալ նախապատրաստական աշխատանքները: Մեր ակնկալիքն է, որ Երեւանում կայանալիք Եվրոպայի առաջնությունում մեդալներից անմասն չմնանք»,- լրագրողների հետ զրույցում ասաց Արթուր Հովհաննիսյանը:

Ֆեդերացիայի նախագահը լիահույս է, որ երեւանյան այս կարեւոր ստուգատեսը եւս մեկ առիթ կլինի, որպեսզի կառավարությունն առավել մեծացնի մարզաձեւի նկատմամբ ուշադրությունն ու նոր զարկ կլինի սպորտաձեւի զարգացան համար: «Մայրաքաղաքում ունենք միայն Երեւանի հրաձգության մանկապատանեկան մարզադպրոցը, եթե կարողանանք նմանատիպ մարզադպրոցներ ունենալ նաեւ Գյումրիում ու Վանաձորում, շատ լավ կլինի: Եվրոպայի առաջնության մասնակիցներից մեծ ակնկալիքներ ունենք նաեւ Գյումրիի մարզադպրոցի սաներից»,-ասաց նա: Ֆեդերացիայի նախագահն ընդգծեց, որ հրաձգություն մարզաձեւը բավականին ծախսատար է, քանի որ մարզիկների մրցումային զենքերը թանկ արժեն ու յուրաքանչյուր կրակոցը եւս գումար արժի: «Եվրոպայի առաջնությունը Երեւանում անցկացնելով՝ մենք մեր ուրույն տեղը կունենանք Եվրոպական ֆեդերացիայի ընտանիքում: Սա նաեւ ոգեշնչող կլինի մեր երկրի համար»,-ասաց նա:

Սպորտային հրաձգության Եվրոպայի մեծահասակների առաջնությունը կանցկացվի փետրվարի 27-ից մարտի 5-ը Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: Բացման պաշտոնական արարողությունը տեղի կունենա փետրվարի 27-ին՝ ժամը 19:00-ին: Արդեն իսկ մրցաշարին մասնակցության հայտ են ներկայացրել ավելի քան 40 երկրի շուրջ 400 մարզիկ եւ մարզիչ: Վերջնական հայտացուցակը կհաստատվի առաջիկա օրերին: Առաջնության շրջանակում կխաղարկվի մեդալների 70 հավաքածու:

ԸՆԴՈՒՆԵԼ Է ԻՐ ՍԽԱԼԸ

Իտալիայի փոխչեմպիոն Միլանի «Ինտերի» իտալացի պաշտպան Ալեսանդրո Բաստոնին ընդունել է, որ սիմուլյացիայի է դիմել «Յուվենտուսի» դեմ Իտալիայի առաջնության 25-րդ տուրի խաղում: Բաստոնիի սիմուլյացիայի հետեւանքով հեռացվել էր «Յուվենտուսի» ֆրանսիացի պաշտպան Պիեր Կալյուլյուն երկրորդ դեղին քարտի համար: Նրա հեռացումից հետո Բաստոնին չէր թաքցրել ուրախությունը: «Սպասեցի մի քանի օր, որպեսզի վերլուծեմ տեղ ունեցածը եւ գնահատեմ տարբերությունը խաղադաշտում իմ զգացողությունների հետ: Ես զգացի հպում ձեռքիս, ինչին իհարկե բուռն արձագանքեցին: Ես հիասթափված եմ իմ վարքից մրցակցի հեռացումից հետո: Մարդն ունի սխալվելու իրավունք, բայց նաեւ պարտավոր է ընդունել սխալը»,- Բաստոնիի խոսքը մեջբերում է Sky Sport Italia-ն:

ԱՇԽԱՐՀ

ԳՐԱՆ ՊՐԻ ՀԱՅ ՋՈՒԹԱԿԱՀԱՐԻՆ

Ռուսաստանի Դաշնության Օմսկ քաղաքում անցկացվել է Վիլհելմ Շպետի անվան լարային-աղեղնային գործիքների կատարողների 3-րդ միջտարածաշրջանային բաց մրցույթը: Հայաստանից մրցույթին մասնակցել է պատանի ջութակահար Էդուարդ Դայանը:

Մրցույթն անցկացվել է՝ «Ջութակ», «Ալտ», «Թավջութակ» անվանակարգերում: Ավելի քան 200 երիտասարդ երաժիշտներ՝ 7-23 տարեկան, պայքարել են մրցանակների համար:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից հայտնում են, որ «Ջութակ» անվանակարգում 1-ին մրցանակը եւ մրցույթի Գրան պրին նվաճել է ջութակահար Էդուարդ Դայանը: Մրցույթի գլխավոր մրցանակին՝ Գրան պրիին, Էդուարդ Դայանն արժանացել է երեք անվանակարգերի առաջին մրցանակակիրների միջեւ անցկացված ընտրության արդյունքում:

Գալա համերգի ընթացքում Էդուարդ Դայանը կատարել է Նիկոլո Պագանինիի Ջութակի թիվ 1 կոնցերտը՝ Օմսկի ֆիլհարմոնիկ նվագախմբի նվագակցությամբ եւ դիրիժոր Միխայիլ Գոլիկովի ղեկավարությամբ:

Էդուարդ Դայանը «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի անդամ է եւ ներկայում ուսումը շարունակում է «Զախար Բրոնի» ակադեմիայում (Շվեյցարիա):

Վիլհելմ Շպետի անվան 3-րդ միջտարածաշրջանային բաց մրցույթը կարեւոր հարթակ է երիտասարդ կատարողների ստեղծագործական աճի եւ մասնագիտական զարգացման համար՝ համախմբելով տարբեր տարածաշրջանների տաղանդավոր երաժիշտներին:

ՏԵՍԱՆԵԼԻ ԿԼԻՆԻ ՏԻԵԶԵՐՔԻՑ

Սաուդյան Արաբիան պատրաստվում է մեկնարկել իսկապես մոլորակային մասշտաբի արվեստի նախագիծ: Նյույորքցի նկարիչ Դոմինգո Սապատան ստացել է քարտ-բլանշ թագավորության մշակույթի նախարարությունից՝ Ռիադում հսկայական որմնանկար ստեղծելու համար, հաղորդում է Page Six-ը:

Որմնանկարը կզբաղեցնի 50,000 քառակուսի մետր տարածք՝ համարժեք ինը ֆուտբոլային դաշտի: Նկարիչները պատկերացնում են, որ աշխատանքը կլինի այնքան մեծ, որ տեսանելի կլինի նույնիսկ տիեզերքից: Նախագիծը, ենթադրաբար, կտեւի 4-6 տարի:

Ինքը՝ Սապատան, առաջիկա աշխատանքը անվանում է իր «մագնա օպերան»՝ իր կարիերայի գագաթնակետը, եւ չի բացառում, որ դա կլինի իր վերջին որմնանկարը: Նկարիչը նախկինում ստեղծել է մեծածավալ նախագծեր Նյու Յորքում, այդ թվում՝ աշխատանքներ Թայմս Սքվերում եւ Մայամիում, բայց Սաուդյան Արաբիայի պատվերը խոստանում է գերազանցել բոլոր նախորդներին ծավալով:

Ըստ աղբյուրների՝ նախագծի բյուջեն գործնականում անսահմանափակ է. իշխանությունները նկարչին տվել են ստեղծագործական եւ ֆինանսական լիակատար ազատություն:

Սապատան ընդգծում է, որ սա պարզապես նկար չէ, այլ լայնածավալ մշակութային հայտարարություն: Նա ապագա որմնանկարը նկարագրում է որպես «մարդկության, սիրո, փոխըմբռնման, միասնության եւ առաջընթացի հռչակագիր»: Նկարիչը նախագիծը համեմատում է Սիքստինյան կապելլայի հետ՝ այն անվանելով «Սիքստինյան կապելլայի մերձավորարեւելյան տարբերակ»:

Նախագծի վրա կաշխատեն ավելի քան 100 նկարիչներ, ինժեներներ եւ ճարտարապետներ: Սապատան խոսում է մշակույթների, էներգիաների եւ գեղարվեստական շարժումների սինթեզի մասին, որը նախատեսված է արտացոլվելու վերջնական աշխատանքում:

Նրա հայտնի աշխատանքների թվում են այնպիսի հայտնիների դիմանկարներ, ինչպիսիք են Քիմ Քարդաշյանը եւ Սոֆիա Վերգարան: Այժմ նկարիչը պետք է մի քանի տարի անցկացնի Մերձավոր Արեւելքում՝ ստեղծելու մի նախագիծ, որը կարող է պատմության մեջ մտնել որպես աշխարհի ամենամեծ որմնանկարը:

● *Փետրվարի 19-ին՝ ժամը 19:00-ին, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Դիմակահանդես»-ը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞վ կարող է աշխատել որպես ուսուցիչ:

Սոնա Ստեփանյան (26 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ: Առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաեւ՝

1) տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող եւ տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլնե-րով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական եւ ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքած անձը,

2) բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձը՝ աշխատանքի ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված դասընթացը կարող է կազմակերպել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կազմակերպությունը կամ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կրթական ծրագրով (մոդուլով):

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ վկայականը կորցնելուց հետո տրամադրվում է արդյոք դրա կրկնօրինակը:

Արա Կիրակոսյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. 2019 թվականի հուլիսի 1-ից հետո վկայականի կրկնօրինակ չի տրամադրվում, այլ վկայականը փոխարինվում է նոր գրանցման վկայականով՝ պետական գրանցման իրական ամսաթվի վերաբերյալ նշումով:

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ընդ որում՝ մինչեւ 2019 թվականի հուլիսի 1-ը տրամադրված գրանցման վկայականը նոր գրանցման վկայականով փոխարինվում է դրա համար դիմումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ներկայացվելու օրվանից 2-րդ աշխատանքային օրը, որի համար վճար չի գանձվում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը armenpress-ից

«Գաբրիել Սունդուկյան-200» կատալոգի շնորհանդեսը Գրականության եւ արվեստի թանգարանի Կոմիտասի անվան սրահում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	0 + 3 + 2 + 7
	Կոտայքի լեռներ	0 + 3 + 3 + 6
	Կոտայքի նախալեռներ	+ 3 + 6 +10 +13
	Գեղարքունիք	0 + 3 + 4 + 8
	Լոռի	+ 3 + 7 + 10 + 14
	Տավուշ	+ 5 + 8 +10 + 14
	Արագածոտնի լեռներ	0 + 3 + 4 + 7
	Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 7 + 10 + 14

	Արարատ	+ 6 + 9 +12 + 16
	Արմավիր	+ 5 + 8 +13 + 16
	Վայոց ձորի լեռներ	0 + 2 + 4 + 7
	Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 9 +13 + 16
	Սյունիքի լեռներ	0 + 2 + 4 + 8
	Սյունիքի նախալեռներ	+ 4 + 9 +14 + 18
	Սյունիքի հովիտներ	+ 8 + 13 +19 + 22
	Երեւան	+ 6 + 8 + 14 + 16

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.02.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*